


ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՑՈՒՄԸ (Մարգիս Շնորհալի)

Հարստութիւնդ, եթէ Աստուծմէ առիւր, վատահ եղի՛ր եւ հաւատա՛, որ զաւակիդ կրկին առատութեամբ կու տայ եթէ ուզես: Պիտի ըսես, ինչպէ՞ս եթէ ուզեմ: Ինչ որ Աստուծմէ պարգեւ առիւր եւ ունիս դարձեալ Աստուծոյ պարգեւէ, իսկ զաւակիդ բարեպաշտութեանդ օրինակը ձգէ եւ ոչ թէ հարստութիւնդ: Աղքատներու երամին ըրած գթութիւնդ անոր վերակացու ձգէ Աստուծոյ անսահման գթութիւնը եւ ոչ թէ փայլուն ոսկին: Սորվեցո՛ւր ողորմութեան բարիքը եւ ոչ թէ տմարդութեան չարիքը: Սորվեցո՛ւր զԱստուած պաշտել եւ ոչ թէ մամոնան: Սորվեցո՛ւր երկնաւոր բաներու ցանկալը եւ ոչ թէ երկրաւորներուն: Վարժեցո՛ւր պատուասէր ըլլալ երկնային պատիւին եւ ոչ թէ մեր սին կեանքի ծաղկաթափ փառքին: Սորվեցո՛ւր սիրել ոչ թէ առօրեայ կեանքը՝ անցաւորը, որ լի է դառնութեամբ, թշուառութեամբ, այլ՝ կայունը, մնայունը եւ բիրապատիկ հանգիստով լեցունը: Իսկ եթէ անիրաւութենէն զրկանքներէ հաւաքած հարստութիւնդ զաւակներուդ պիտի թողուս, գիտցի՛ր եւ հաւատայ, թէ ուր որ անիրաւութիւն եւ զրկանք կայ, հոն Աստուծոյ բարկութիւնը կը գտնուի:

Արդ, առաջին հերթին ինչո՞ւ Աստուծոյ բարկութեան պատճառները չես ոչնչացներ բաշխելով եւ տալով ինչքերդ, այլ՝ Անոր բարկութեան կցորդ ու բաժնեկից կը դարձնես զաւակդ:

ՅՈՐԴՈՐԱԿՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՏԱՏՈՒՄԸ

2.- Պատրաստութիւն ընծաներուն Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՒԱՏԱՅԵԱՆՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Յիսուսի Մարմինն ու Արիւնը խորհրդանշող հացն ու գինին կ'ընծայուին ժողովուրդին, որպէս Մարմին եւ Արիւն Քրիստոսի, եւ աստուածային երկնային այս պարգեւին որպէս երախտագիտութիւն եւ շնորհք, Հօր Աստուծոյ ուղղուած օրհնութիւնն է, որ կը ծաղկի հաւատացեալներու սրտերուն մէջ, եւ դպիրները հարազատօրէն թարգմանը հանդիսանալով այս զգացումին՝ վերացած կ'երգեն.-

«Ամէն: Երկնաւոր Հայր, որ քու Որդիդ մահուան մատնեցիր՝ մեր մեղքերուն պարտքը վճարելու համար: Անոր թափած արեան միջնորդութեամբ կ'աղաչե՛նք քեզի, ողորմէ՛ քու բանաւոր հօտիդ»:

Հոգեւորոգ այս սրբազան պահուն մէջ՝ պատարագիչ քահանան իր սրտաբոխ աղերսանքը Աստուծոյ ուղղելով կը բարձրացնէ Սկիհը: Աստուածորդին է, որ վերստին կը բարձրանայ դէպի Գողգոթա, կը բարձրանայ՝ որպէս Գառն Աստուծոյ, որպէսզի գոհ եւ պատարագ՝...

Շառունակետի



ԶՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԵԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ՃԷ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2024 ԹԻՒ 33

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Երգ 4.9-15.8.14: Ես. 7.10-16: Գղ. 3.29-4.7: Ղկ. 2.1-7

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏՕՆ ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ 2. 1-7

Այդ օրերուն Օգոստոս կայսրը հրամանագիր հանեց, իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրեաստանի Բեթղեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթղեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրով եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

ԱՌԱԿԱՅ (Գ. 23, 19-25)

Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ ֆու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմուլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմուլն ու շոայլը աղֆատ կ'ըլլան եւ շատ ֆուըն՝ պատտած հանդերձներ կը հագցնէ:

Հնազանդէ՛ մօրդ, որ ֆեզ ծներ է, ու մի՛ անարգեր ֆու հայրդ, երբ կը ծերանայ: Հշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանիկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, իրատն ու հանճարը:

Արդարին հայրը շատ պիտի ցնծայ եւ իմաստուն զաւակ ծնանողը անոր համար պիտի ուրախանայ: Թող ֆու հայրդ ու մայրդ ֆու վրադ ուրախանան ու ֆեզ ծնանողը թող ցնծայ:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ՍՈՒՐԲ ԿԱՏՈՒՎՃԱԾՆԻ



«Վերափոխում» բառը, գրաբար լեզուով նկարի առնուած, կը նշանակէ վեր, դէպի երկինք փոխադրուիլ: Իսկապէս ալ, վերափոխումը Սուրբ Աստուածածնի մահուան յիշատակումն է, որ կը կատարուի Օգոստոս 15-ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12 - 18 հանդիպող Կիրակին:

Վերափոխումը Նայասարանայց եկեղեցոյ հինգ փաղաւարներէն մէկն է: Այս փոսին առթիւ մեր եկեղեցին կը նշէ «Քրիստոսի գալուստն ի փոխումն մօրն եւ կուսի»: Այլ խօսքով, փօնը կ'ակնարկէ այն պատահարին, ըստ որուն Քրիստոս ինք իջաւ իր մօր մահուան առթիւ եւ զինք փոխադրեց երկինք:

### ԿԱՆՈՆ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՏՈՒՎՃԱԾՆԻՆ ՕՐԴ. ԴԶ (գրաբար)

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն ջահագգեստով պայծառացեալ լուցանելին զպատեքս իւրեանց. եւ միաձայնեալ ասելին, օրհնեալ եւ ամենօրհնեալք ի կանայս:

#### (Աշխարհաբար)

Այսօր միասին հաւաքուած սուրբերը՝ երանելի առաքեալներն ու սուրբ կոյսերը, լուսաւոր պգեստներով պայծառացած, իրենց լապտերները կը վառեն եւ միաձայն կ'ըսեն՝ օրհնեալ եւ դուռն կիներուն մէջ

## ՎԵՐԱՓՈՒՄԻ ԱՐԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԽԱՂՈՂՕՐԴՆԵՐ



«Հնաւանդ, գեղեցիկ, այլեւ բարոյալից սովորութիւն էր հայ ժողովուրդի մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը հասունցած առաջին եւ լաւագոյն բաժինը իբրեւ շնորհակալիք եւ առ ի երախտագիտութիւն Աստուծոյ կը տրուի: Եթէ նախաբխտունեական շրջանին այս բարոյալից սովորութիւնը կար եւ ան կը մատուցուէր աստուածներուն, ապա պահուեցաւ գաղափարը եւ շարունակուեցաւ այդ ընծայաբերումը մէկ տարբերութեամբ՝ այս անգամ եկեղեցիին եւ անոր միջոցաւ ուր որ անհրաժեշտութիւն է:

Խաղողը բոլոր պտուղներուն մէջ նախապատիւ է, որովհետեւ անկէ կը պատրաստուի գինին, որ Ս. պատարագի, Ս. հաղորդութեան, Ս. պսակի խորհուրդներուն մէջ խորհրդանշական գործածութեան կը դրուի»:

\*\*\*\*\*

### ԲԱՐԵՍՈՍՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ Ս. ԿՈՅՍ ԱՍՏՈՒՎՃԱԾՆԻՆ

Կը խոնարհիկք քու առջեւդ, Սուրբ Աստուածածին, եւ կ'աղաչենք քեզի, ո՛վ անարատ Կոյս. բարեխօսէ՛ մեր անձերուն համար, եւ խնդրէ՛ քու Միածին Որդիէդ, որ մեզ ազատէ փորձութիւններէն եւ մեր բոլոր նեղութիւններէն: Ամեն:

## ՀՈԳԵՒՈՐ ԳԱՏԳԱՍ

### ՎԵՐԱՓՈՒՄԻ ԱՌԻԹ՝ ԵՐԿԻՆՔԻ ՄԱՍԻՆ ՄՏԱՃԵԼՈՒ

Աստուածամօր վերափոխման առիթով, խնդրենք Քրիստոսէ, որ պարգեւէ մեզի մտքի վերափոխում: «Մտքի վերափոխում» ըսելով, կը հասկնամ, մեր մտքի եւ ուշադրութեան սլաքը դարձնել դէպի երկինք եւ երկնայինը:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԳԱՍԸ

Դժբախտաբար մարդոց ուշադրութեան, սիրոյն ու պաշտամունքին առարկան աշխարհը դարձեր է: Մարդիկ չեն ուզեր մտածել երկինքի մասին: Աստուածամօր վերափոխումը առիթ մըն է, վերափոխուելու մտովին եւ հոգիով: Անոնք, որոնք կը սիրեն զԱստուած եւ կը սիրեն Աստուծոյ Մայրը՝ թող երկինքին նային եւ անոր մասին խոսեն: Ես կը սիրեմ երկինքը դիտել եւ կը զքանջանամ անոր գեղեցկութեամբ, մանաւանդ երբ ճերմակ ամպի քանի մը կտորներ տարածուած են հոս ու հոն երկինքի կապոյտին վրայ: Ճերմակ ամպն ու կապոյտ երկինքը ձեզ չի՞ յիշեցներ Աստուածամայրը, որ ընդհանրապէս կը ներկայացուի ճերմակ եւ կապոյտ գոյներով: Փառք Տիրոջ, որ երկինքը իմ սիրելի մօրս՝ Մարիամին գոյնը ունի:

Ո՛վ Աստուածամայր ողորմէ՛ մեզի

## ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

### ԵՐԲ ԿԱՏՈՒԾՄԷ ԶՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԸ Կ'ՈՒԶԵՍ ԽՆԴՐԵԼ, ԿԱՐԿՎ՝ ՍՍ.ՂՄՈՍ 56

Ողորմէ՛ ինձի, ո՛վ Աստուած մարդիկ կեանքիս կը սպառնան: Անոնք որոնք ինձի դէմ կը պատերազմին՝ կը նեղեն զիս ամէն օր:

Թշնամիներս զիս օրն ի բուն ոտնակոխ կ'ընեն, շատեր ինձի դէմ պատերազմ կը մղեն ամբարտաւան կերպով: Բայց վտանգի ժամանակ ես ճեղքի՛ կը վստահիմ: ԶԱստուած կ'օրհնեցեմ իր խօսքին համար, Աստուծոյ կը վստահիմ, եւ ա՛յ չեմ վախնար. մարդ արարածը ինչ կրնայ ընել ինձի: Անոնք ամէն օր իմ խօսքերս կ'այլափոխեն, եւ կը խորհին՝ թէ ի՞նչ չարիք կրնան հասցնել ինձի: Ինձի դէմ դաւ կը նիւթեն, դարան կը մտնեն, եւ քայլերուս կը հետելին՝ զիս սպաննելու առիթի սպասելով: Այսօր անհրաւորութիւն անպատիժ պիտի մնայ, ո՛վ Աստուած, բարկութեամբդ զանոնք գետնի՛ն հաւասարեցուր: Գիտես հաշիւը թափառումներուս, գիտես քանակը թափած արցունքիս, չէ՞ որ ասոնք արձանագրուած են գիրքիդ մէջ: Այն օրը, որ ես օգնութեան կանչեմ ճեղք, թշնամիներս նահանջի պիտի դիմեն, որովհետեւ հաստատ գիտեմ, թէ դուն հետս ես, ո՛վ Աստուած: ԶԱստուած կ'օրհնեցեմ, իմ խօսքիս համար, Տէրը կ'օրհնեցեմ, իր խօսքին համար: Աստուծոյ կը վստահիմ, եւ ա՛յ չեմ վախնար. մարդիկ ի՞նչ կրնան ընել ինձի: Պիտի կատարեմ ճեղքի ըրած իմ ուխտերս, ո՛վ Աստուած, երախտագիտութեան իմ գոհերս պիտի ընծայեմ ճեղք: Որովհետեւ զիս մահուրէն փրկեցիր, ո՛րքոյս սայթափումէ հետո պահեցիր, որպէսզի ես Աստուծոյդ ներկայութեան մէջ ապրիմ, այն լոյսով՝ որ կեանք կու տայ: